Լավություն արա՝ ջուրը գցիր ...

ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS 2016, ապրիլ , № 31 БАРЕГОРЦ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԵՌԱՄՍՅԱ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԴՐԱՄԱՀԱՎԱՔ - 2015

2015 թ. նոյեմբերի 13 -ին Լոս Անջելեսում (ԱՄՆ) տեղի ունեցավ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հերթական ամենամյա դրամահավաքը: Ընթերցողներին սիրով ներկայացնում ենք Թագուհի Արզումանյանի՝ այդ օրվա բացման խոսքը.

- Սիրելի՛ հայրենակիցներ, արարչագործության ամենից բովանդակալից ու ամենից մեծ նվերը մարդկային բանականությունն է, իսկ ամենից գեղեցիկ ու առաքինի են նրանք, ովքեր իրենց հոգեմտավոր ու ֆիզիկական բոլոր կարողություններն օգտագործում են հանուն ազգային ու համամարդկային վսեմ իդեալների, հանուն հայրենիքի ու ժողովրդի բարօրության:

Բարձրագույն այս առաքինությամբ ապրում են այն քչերը, որոնց երակներում անվերջ մռնչում է նախնիների արյան կանչը, հիշողության մեջ հավերժորեն առկայծում նրանց պայծառ հիշատակը: Բայց մարդկային սերընդափոխության բնական հարահոսը, առաջընթացին համահունչ, պարտավորեցնում է համազգային իդեալներին սեր և նվիրվածություն, նախնիների լավագույն հատկանիշների յուրացում և նոր ժամանակների՝ ազգօգուտ գործերին անմնացորդ նվիրվելու, պատրաստակամություն:

Մեր իմաստուն ժողովուրդն իր ողբերգական ու հերոսական պատմության ընթացքում, ժամանակների ու հանգամանքների թելադրանքով, իր հեքիաթներում ու ավանդազրույցներում, էպոսում ու գեղարվեստական տարաբնույթ երկերում կերտել է հրաշալի և օրինակելի հերոսների ուսանելի կերպարներ ու դրել սերունդներին ի տես: Այդ կերպարները թե՛ ժողովրդի պատմական հիշողության մեջ, թե՛ իրականում եղել են ու սերունդ-սերունդ հաջորդում են իրար, նրանք բոլոր ժամանակներում եղել են ու կան մշտապես, պարզապես անուններն են փոխվում ժամանակների և հանգամանքների համեմատ: Բայց այդ մարդիկ՝ ժողովրդի և հայրենիքի իրական նվիրյալները, հանուն ունեցվածքի կամ անձնական փառքի չեն գործել, այլ պազապես չէին կարող ձեռքերը ծալած սպասել և հետևել իրադարձությունների անբարենպաստ ընթացքին, նրանք իրենք են ժամանակի հարահոսի մեջ որոշում իրենց դերն ու անելիքը և ժամանակի ու հասարակական կյանքի վրա ներգործում են այնպես, որ դրանք ընթանան հաջորդ սերունդների համար ցանկալի հունով:

Եթե մտավորականների ու հասարակական լայն խավերի մեջ սոցիոլոգիական հարցում կատարելու լինենք, թե ո՛վ է մեր ժամանակներում բոլորի սիրուն ու համակրանքին արժանացած հանրաճանաչ այդ մարդն այսօր, կստանանք բացարձակ մեծամասնության անվերապահ ու միանշանակ պատասխանը՝ դա «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն, Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան, ՀՀ վաստակավոր մանկավարժ, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանն է: Նա, իր լուսահոգի ծնողներից հետո, հայոց պատմության ու մշակույթի զավակն է, մեր քաջակորով ու իմաստուն նախնիների ազնիվ շարունակությունը: Թվում է՝ նա գալիս է մեր պատմության հեռավոր խորքերից՝ Հայկ Նահապետի ժամանակներից, ու մասնակցել է մեր ժողովրդի համար կարևորագույն նշանակություն ունեցած բոլոր իրադարձություններին, ինչպես որ տասնամյակներ առաջ իրականում, այն էլ ոչ շարքային դերակատարությամբ, մասնակցել է Արցախյան պատերազմին ու այսօր էլ՝ գիտամանկավարժական գործունեությանը զուգահեռ՝ իր նպաստն է բերում մեր ազատագրված հայրենիքի բարգավաճմանը:

«Շունչդ տո՛ւր, հոգիդ, բայց քո հայրենիք մի՛ տար թշնամյաց»,- հայ սերունդներին պատգամել է մեր ժողովրդի մեծ ուսուցիչներից մեկը՝ Ա-բովյանը, նրա հաջորդներից մեկի՝ Ռաֆֆու բնութագրմամբ՝ սիրո բարձրագույն դրսևորումը հայրենասիրությունն է: Այս պատվիրաններին գումարվել են նաև մեր ժողովրդին բնորոշ՝ հայ լինելու իրավունքի և «անանձնական ուրախությամբ» ապրելու մեծարենցյան ամենամարդասիրական կարգախոսները:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամն» իր առաքելությունն սկսել է իրականացնել դեռևս Արցախյան պատերազմի ժամանակներից՝ 1993 թվականից, և անցել իրոք արգասավոր ճանապարհ: Սկզբում Արցախի ազատագրված շրջանների բազմազավակ ընտանիքներին օգնություն էր տրվում դրամական տեսքով, հետո գործարկվեցին այժմ իրականացվող մյուս ծրագրերը «Ծառեր» «Կով», «Գիրք» և այլն:

Հայ մարդկանց ընտանիքներով ազատագրված Արցախի հողին կապելու լավագույն նախաձեռնություններից մեկը խոշոր եղջերավոր անասունների «Կով» ծրագիրն է: Դրանք ընտանիքներին տրվում են ըստ երեխաների քանակի. 4 երեխա ունեցող ընտանիքին հատկացվում է մեկ կով, 6, երեխա ունեցողին՝ երկրորդը, իսկ 8 և ավելի ունեցողներին՝ երրորդը: Ծնված հորթը 5 ամսական դառնալուց հետո հիմնադրամը 30 հազար դրամով գնում է և տալիս մեկ ուրիշ ընտանիքի: Շարունակական այս ծրագրով արդեն Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին տրվել է 289 կով: 1996 թ. սկսած՝ այս ծրագրով մեկական կով է հատկացվել նաև Արցախի Մարտունու շրջանի Մաձկալաշեն և Սոս գյուղերի զոհված ազատամարտիկների ընտանիքներին:

Հայրենի երկրի և բնակիչների կապ ստեղծող, արտագաղթը կանխող արդյունավետ ու կարևոր այս ծրագրին կարող է մասնակցել ամեն ոք՝ մեկ կովի համար տրամադրելով նրա արժեքը՝$ 700:

Պրոֆ. Գ. Մելիքյանի ղեկավարությամբ հիմնադրամն իրականացնում է նաև ծառատունկի «Ծառեր» ծրագիրը, որը հայրենի բնության գեղեցկացման ու հարստացման հետ միաժամանակ ունի և ռազմավարական նշանակություն: Պտղատու կամ դեկորատիվ (հիմնականում ընկուզենի և սոսենի) ամեն ծառ արժանանում է զով ու բարիք փնտրող ճամփորդների օրհնանքին: Տասնամյակների ընթացքում հիմնադրամի միջոցներով և ուսանողների ձեռքով Հայաստանում ընդհանուր առմամբ տնկվել է 220 000, իսկ Արցախի ազատագրված շրջաններում՝ շուրջ 10 հազար ծառ, որոնցից շատերն արդեն վաղուց բերքատու են:

Հայրենանվեր այս ծրագրի առաջին հովանավորներից մեկը երջանկահիշատակ Սերժ Փափայանցն է, ում անվան պուրակ և աղբյուր – հուշարձան է տեղադրված Հայաստանից Արցախ՝ Բերձոր քաղաք մտնող ճանապարհին: Ազգանվեր այս հայորդուն լավ են հիշում ՀՀ, ԼՂՀ և Ջավախքի շատ բնակավայրերում՝ որպես իր միջոցներով դպրոցներ և մանկապարտեզներ վերանորոգող ազնիվ հայորդու:

Պրոֆ. Գ. Մելիքյանի մտահղացմամբ ու անմիջական հսկողությամբ դեռևս 90-ական թթ. պատերազմական ժամանակներից գործում է «Արփեն մայր և նորածին» կենտրոնը, որի հովանավորներն են ամերիկահայ Ջորջ և Քերոլան Նաջարյանները, տնօրենը երկար տարիներ Սարգիս Գալստյանն էր, իսկ հիմա՝ Լիլիթ Գալստյանը: Մայրերն այստեղ հղիության 3,5 ամսականից մինչև հետծննդյան մեկ ամիսը խնամքի հետ միասին ստանում են սնունդ, հագուստեղեն, կոշկեղեն և հիգիենիկ այլևայլ պարագաներ: Այս կենտրոնը մեծ կարևորություն ունի մեր գենոֆոնդի պահպանման համար. այստեղ արդեն ծնվել է շուրջ 30 հազար երեխա, և ավելի քան 3 հազար էլ՝ Հայաստանում գործող համանման «Անահիտ» կենտրոնում: Վերջինս հիմնել են բժշկապետ Արա Գասպարյանը, բուռն հայրենասեր Վարդան Ջանգոզյանը: Իսկ այնուհետև գործը եռանդով ու նվիրումով շարունակել է մեծ ԱՄՆ-ում հեղինակություն վայելած բժշկուհի Նազելի Չարչյանը:

Ուրեմն՝ իսկապես պատկառելի թիվ՝ շուրջ 33 հազար հայ երեխա, որոնք մեր վաղվա հույսն են, մեր ապագան, Չարենցի ասած՝ «մեր լավ գալիքի ոսկեհեր մանուկները»:

Գաղտնիք չէ, որ Արցախի ազատագրված շրջանների մանկապարտեզի և դպրոցահասակ երեխաներն ունեն թերսնման խնդիր: Այդ վտանգի կանխումը հնարավոր է դարձել հիմնադրամի և ԱՄՆ-ում գործող «Focus on Children now» կազմակերպության համատեղ գործունեությամբ, որի հիմնադիրները ամերիկաբնակ իրանահայերն են: Գնահատելի են հատկապես Կարինե Աբույանի, Վարուժ Կյուրեղյանի, Ռոբերտ Ամիրյանի, Էլեանորա Հայրապետյանի օրինակելի նվիրումն ու ներդրած ջանքերը:

Այժմ էլ Արցախի ազատագրված շրջանների հինգ դպրոցների հարյուրավոր աշակերտներ հիմնադրամից ստանում են անհրաժեշտ օգնություն:

«Գուրգեն Մելիքյան» հիմնադրամն ունի գործունեության ոչ պակաս կարևոր ուրիշ ոլորտներ էլ: Գիտակրթական ծրագրով օգնում է անվճարունակ հարյուրավոր ուսանողների՝ մասամբ կամ ամբողջությամբ վճարելով ՀՀ, Արցախի և սիրիահայ ուսանողների ուսումնական վարձավճարները, առավել արժանավորներին տրամադրում կրթաթոշակ, հրատարակում է հայագիտական ու մշակութաբանական արժեք ներկայացնող հայագիտական ու գեղարվեստական գրքեր, ուսումնական ձեռնարկներ ու դասագրքեր, որոնք բաշխվում են Հայաստանի և Արցախի գրադարաններին: Միշտ օրակարգում է Բերձորի դպրոցներին ու մանկապարտեզներին, Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին ցուցաբերվող օգնության խնդիրը:

Այս ամենի հետ միասին հիմնադրամն աջակցում է ամերիկահայ բարեգործների (նախաձեռնող՝ Ալեք Բաղդասարյան)՝ Արցախի մշակութային կենտրոն Շուշիում կազմակերպվող համահայկական մանկապատանեկան ամենամյա աստունքի փառատոնին, որին Երևանի, Ստեփանակերտի, Արցախի հինգ շրջանների ներկայացուցիչների հետ միասին մասնակցում են Ամերիկայից, Իրանից, Ջավախքից, Ուկրաինայից, Բելառուսից ժամանած շուրջ 100 հայ երեխաներ: Սա ոչ միայն թաքնված տաղանդներ հայտնաբերելու միջոց է, այլև մշակութային համազգային տոն, որը հնարավորություն է տալիս տարբեր երկրներում ապրող հայ երեխաներին լինելու Արցախում, շփվելու միմյանց հետ, ճանաչելու մեր հրաշք հայրենիքի այդ երկրամասն ու նրա մարդկանց, հայրենի հողի հետ կա-

պելու իրենց երազանքներն ու գալիքի ծրագրերը:

Սիրելի՛ հայրենակիցներ, այս գեղեցիկ ծրագրերն իրականացնելու նպատակով է կազմակերպված այսօրվա դրամահավաքը, առանց որի անկարելի պիտի լինի որևէ ձեռնարկի իրականացում, ձեզնից ու ձեր վերաբերմունքից շատ բան է կախված:

Այո՛, այսօր ազատագրված Արցախը պետք ունի նվիրյալ, խնամքոտ ու հոգատար ձեռքերի: Նյութական օժանդակության հետ միասին նրա սոցիալական կարիքները բավարարելու, կենցաղն ու հոգեմտավոր կյանքը կազմակերպելու սուր անհրաժեշտություն դեռևս կա: Այս հայրենանվեր հրամայական գործն է իրականացնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»:

Այս հանդիսավոր օրը ես ուզում եմ բոլորիդ անունից խորին երախտագիտություն հայտնել նախ հիմնադրամի գործադիր տնօրեն պրոֆ. Գուրգեն Մելիքյանին, ինչպես նաև հիմնադրամի հոգաբարձության խորհրդի անդամներին: Նրանցից անձամբ ճանաչում եմ ԵՊՀ դասախոսներ, բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսորներ Արծրուն Ավագյանին ու Սամվել Մուրադյանին, ովքեր միշտ եղել են Գուրգեն Մելիքյանի կողքին նրա բոլոր հայրենանվեր ձեռնարկումներում:

Սիրելի Հայրենակիցներ, թո՛ղ որ Աստծու օրհնությունը նրանց և բոլորիդ վրա լինի, և միշտ հաջողեք իրենց հայրենանվեր սուրբ գործում:

Մեր տունը մեր ձեռքով ենք կառուցելու: Անձամբ ես հավատում եմ և ուզում եմ բոլորս էլ հավատանք հայության կենսական ու աշխարհաշեն ուժերին, նրա հարատևությանն ու մեր երազի երկիր Հայաստանի լուսաշող ապագային, որովհետև մշտարթուն են հայի աննահանջ ոգին, ստեղծագործ միտքն ու արարող ձեռքը, որոնց կարող է քաջալերել բոլորիս բարյացակամությունը, Արցախն ու Հայաստանը ծաղկեցնելու, հայության նոր սերունդներին ապրելու արժանի հայրենիք դարձնելու պատրաստակամությունը:

ԹԱԳՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

º ð º ì ² ÜÆ ä º î ² Î ² Ü Ð ² Ø ² È ê ² ð ² Ü

ՀՐԱՄԱՆ № 30 « 115 23 ՓԵՏՐՎԱՐԻ 2016 թ. ՔԱՂԱՔ

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներքոհիշյալ ֆակուլտետների գերազանցիկ ուսանողներին 2016 թ փետրվարի 1-ից նշանակել անվանական կրթաթոշակ

Նազելի Չարչյանի անվան

Նահապետյան Սոնա Սուրիկի - դեղագիտ. և քիմիայի ֆակուլտետ, դեղագիտ. բ., մագ. 2-րդ կուրս

Ստեփան Ալաջաջյանի անվան

Սարգսյան Տիգրանուհի Էդվարդի - հայ բանասիրության ֆակուլտետ, 3-րդ կուրս

Հիմք՝ ԵՊՀ գիտական խորհրդի 2016 թ. փետրվարի 11-ի նիստի որոշումը:

ՌԵԿՏՈՐ (ստորագրություն) Ա ՍԻՄՈՆՅԱՆ
ՃԻԵՏ Է՝ (ստորագրություն) Ա ԳԱԼՍՏՅԱՆ

º ð º ì ² ÜÆ ä º î ² Î ² Ü Ð ² Ø ² È ê ² ð ² Ü

ԴԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

№ 1142, 22.12. 2015

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանին ԵՊՀ դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի «Դեղագիտություն» ծրագրով թվով երեք մագիստրանտներին՝

1. Անի Չախոյանին
2. Սոնա Սողոյանին
3. Ժաննա Թադևոսյանին

2015 թ. հոկտեմբերից դեկտեմբեր ժամանակահատվածում դոկտոր Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակը տրամադրելու՝ նրանց ՌԴ Բելգորոդի համալսարան մեկնելու և իրենց մագիստրոսական թեզերն այնտեղ կատարելու համար:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ՝ (ստորագրություն) Տ. ՂՈՉԻԿՅԱՆ

ԴԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ (ստորագրություն) Ա. ՍԱՂՅԱՆ

Fundraising-November 22, 2015

Last Name	Name	Amount in dollars	Check/Cash
Aboolian and Markarian	Karine and Saro	500	check #1378
Achassian	Hamo and Emma	150	cash
Aivazian	Hovhannes	200	cash
Alajajian	Aram M	250	check #3373
Aleksandyan	Irina	100	check #562
Allied west paper corp		3000	check #066777
American heating technologies INC		500	check #2663
Anahid Fund		1000	check #1057
Arpa Dental Laboratory		200	check #1394
Arzoumanian	Tagoui	100	check #145
Arzoian	Hrach	100	cash
Asheghi	Ruben	300	cash
Atelier de Paris		100	check #10586
Avagyan	Mushegh and Gayane	200	cash
Babajanian	Ishkhan and Anahit	100	check #1394
Badalian	Sooren	200	cash
Badalyan	Sarkis and Aida	200	cash
Alec Baghdasaryan Properties		750	check #1693
Baghdanian	Ariknaz and Avydis	150	check #358
Baghdanian	Hamo and Medik	100	check #1231
Baghumyan	Varujh	200	cash
Balian	Harout Raffi	1000	check #214
Balyan	Misak	150	cash
Bashmakian	Hagop and Alissa	300	check #556
Bayat	Elma	60	cash
Charchian	David M.	2000	check #1241
Benjamin Charchian & Associates		250	check #51747
Der Sahakian	Suzanne	500	check #2640
Edwin	Tahmazian	100	cash
Eskandar	Alenoosh	200	check #4047
Fundukian	V. and S.	300	check #418
G.Z. Anonym		100	cash
Galstanian	Rafik	300	check #1561
Galstanian	Artur	250	check #1885
Garkanian	Vachik and Rita	100	check #2406
Gharakhanian	Haik	200	check #1598
Ghasemian	Hovik and Jacline	150	cash
Ghevondyan	Masis	2000	cash
Golden Plaza		500	check #003572
Gregory	Victor	500	check #4962
Grigorian	Rita and Arpine	1200	check #119
Guledjian	Hagob and Anahit	200	check #8406
Haghounian	Mariette	600	check #0721
Halabi	Anahid	500	cash
Haroutunian	Harry	100	check #4892
Hayrapetian	Armen and Eleanora	500	check #1565
Hayrapetian	Haik and Teresa	1000	check
Haytayan	Leon Chant and Virginia	1000	check #1985
Hayrapetian Dental Corp		1000	check #5249
Hovnanian	Christine and Varant	200	check #2747
Hovsepian and Davidian	Dickran and Eugenie	200	check #109
Hrazdan Majidiyeh		1000	check #1071
Kalognomos	Medea and Shurik	500	check #8467
Kanian	Mary and Nick	1 000	check #3565
Kazandjian	Vahe and Seta	300	check #7534
Khanlaryan	Albert	300	check #9202
Kohler	Haigoosh	800	check #3436
Kusherian	Vardui and Katia	200	cash
Kyureghian	Varujh and Emma	150	cash
Kyureghian	Varujh and Emma	2000	cash
Kyureghian	Varujh and Emma	1000	cash
Kyureghian	Varujh and Emma	500	cash

Lusparyan	Oganes	300	cash
Mamulian	Ararat and Karine	100	cash
Manousadjian	Vilen and Sonia	200	cash
Marashelian	Gevorg	100	cash
Marashlian	Levon	200	check #812
Mardirossian	Timmy and Sedik	1000	check #3611
Mardoyan	Alfred and Vanuhi	100	check #3769
Markarian	Rooben and Valentine	500	check #1377
Martin	Rosie	40	cash
Matevosian	Mateos	300	cash
Mehrabian	Garnik and Satik	60	cash
Melikyan	Gurgen	2000	lottery tickets
Mesropian	Seroj and Medik	225	cash
Mesropian	Seroj	500	check #209
Mkrtchian	Hacob	100	cash
Mokhtarian	Ohannes and Vanoosh	700	check #3319
Nersisian	Edward and Karine	100	cash
Ovanessian	Arkady and Irene	1 000	check #2354
Ovanessyan	Reymond	40	cash
Papayans	Sheila	2000	check #2080
Pashayan	Edgar	200	cash
Petrossian	Grigor	250	check #980
Pirjanian	Souren (VSP Corporation)	1000	check #9854
Pogarian	Asbed and Aida	100	check #5491
Rouben Gourjian Accounting Services		200	check #4083
S & A Mechanical , INC		500	check #11063
Sanamian	Armen	200	cash
Sargsyan and Martirossyan	Stepan and Nelly	150	cash
Sarkissian	Jacqueline	30	cash
Shaghgamyan	Davit	200	check #1087
Shahbazian	Karnik	500	check #1910
Shahbazian	Aris	200	cash
Shahnazari	Saro	713,63	cash
Six Star Electric, Inc.		200	check #1247
Sunday Tennis Club		470	cash
Tchobanian and Khachadourian	Aida and Aram	1 500	check #3034
Ter Sahakian	Diana and Vrej	150	cash
Tumanyan	Raffi and Astghik	700	cash
Vahagn Setian Charitable Foundation		800	check #1233
Vartanian	Olga and Sooren	100	check #7272
Vartanian	Bobgin	1000	cash
Vartanian	Frederick	225	cash
Vartanian	Frederick	250	check #4508
VJ & Associates		750	check #1389
Yegiyants	Artoush and Hasmik	250	check #1015
Yegiyants	Artoush and Hasmik	750	check #1249
Yegiyants	Sara	500	check #1097
Yegiants	George and Matilda	250	cash
Yegiyants	Suren and Anna	200	check #1048
Zargarian	Vigen	30	necklace
Zargarian	Vigen M.D.	860	check #6696
		$ 54 403,63	

Մուծված ուսանողական վարձավճարներ

2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակ՝ փոխանցված 21.01.2016թ.

Արևելագիտության ֆակուլտետ

Քեխյան Անուշ-թյուրքագիտ., 1-ին կուրս, 120 000դ

Ռուս բանասիրության ֆակուլտետ

Բաղդասարյան Ռուզաննա-4-րդ կուրս, 100 000դ

Հայ բանասիրության ֆակուլտետ

1. Ավագյան Էլեն – 3-րդ կուրս /հեռակա/ – 150 000֏
2. Քյարունց Անի - 3-րդ կուրս, 200 000 ֏

Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ

Աբգարյան Վիկտորյա - 4-րդ կուրս, 150 000֏

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ

1. Բաբայան Ծողեր - միջազգ.հարաբերութ. բաժին, 3-րդ կուրս, հեռակա, 150 000֏
2. Բունիաթյան Ջոան - քաղաքագիտ. բ, 5-րդ կուրս, հեռակա, 50 000֏

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ

Կատվալյան Էմմա- –ԼՄՀ բաժին,1-ին կուրս, 200 000֏

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ

Մինասյան Տաթևիկ -4-րդ կուրս, 200 000֏

Տնտեսագիտության ֆակուլտետ

Մնացականյան Մարիամ - կառավարում բ., 4-րդ կուրս, հեռակա,100 000֏

Պատմության Ֆակուլտետ

Եղիկյան Նոյեմի - 4-րդ կուրս/հեռակա/, 100 000֏

Այլ Բուհեր

1. Բարոյան Դավիթ-Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ճարտարապետության և դիզայնի ֆակ., 4-րդ կուրս, 100 000֏
2. Տեր-Սահակով Արսեն – Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Ճարտարապետ. ֆակ., 2-րդ կուրս, 300 000֏
3. Բաղդասարյան Նարա - ԱրՊՀ- բանասիր. ռուսաց լեզու և գրակ.,1-ին, կուրս, 100 000֏

Ջավախեցի ուսանողների ուսման վարձավճարներ

Հ/հ	Ազգանուն, անուն	Գումար/֏	ԲՈՒՀ	Նպատակ	Ամսաթիվ
1	Իգիթյան Սվետլանա	100000	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ Պատմության ֆակ. , 2-րդ կուրս	18.03.2016
2	Հովհաննիսյան Վահե	100000	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ տնտես. և կառավարում, մագիստրատուրա, 2-րդ կուրս	18.03.2016
3	Եսոյան Լուիզա	100000	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ Միջազգային հարաբերություններ, 3-րդ կուրս	18.03.2016
4	Ռոտակյան Ռիմա	100000	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ Միջազգային հարաբերություններ, 3-րդ կուրս	18.03.2016
5	Վանցյան Շուշանիկ	100000	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ Ռուսական բանասիրության ֆակ., 3-րդ կուրս	18.03.2016
6	Բաբաջանյան Ադանա	100000	ԵՊՀ հիմնադրամ	Օգնություն ուսման ծրագիր՝ Ժուռնալիստիկայի ֆակ., 2-րդ կուրս	18.03.2016

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԿՅԱՆՔ ԿԱՄ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Բոլոր ժամանակներում էլ արդիական է չարենցյան հանճարեղ կարգախոսը՝

Հիշատակը երկրից է աճում և
ոչ թե բառերից կամ չայներից,
Եվ ցող է դնում ուրիշ
վարդերի վրա...

Այո՛, հիշատակը չի ճանաչում պաշտոն ու հարստություն, տարածություն ու ժամանակ, այլապես չէր լինի պատմական հիշողություն, և անցյալից ոչ ոք՝ ո՛չ հանճարեղ մտածողները, ո՛չ պետական ու ռազմաքաղաքական գործիչները ժամանակի հարահոսով չէին հասնի մեզ ու գալիք սերունդներին: Մարդը իր ապրած տարիներին է վայելուչ վարքով ու հիշողության արժանի գործերով կերտում ապագայի հիմքը, սակայն քչերին է տրված սովորական մահկանացուից զանազանվելու առաքինությունը: Լավ գործի ունակ մարդը քանի որ չգիտի իր կյանքի տևողությունը, չպիտի վաղվան թողնի իր այսօրվա անելիքը:

Մարդկային բնածին բարությամբ ու բացառիկ ազնվությամբ օժտված, կյանքով ու եռանդով լի Վահագն Սեթյանը դեռևս ոտք չէր դրել հասունության շեմը, լուսավոր երազանքներ ուներ ու վեհ նպատակներ, գիտեր բարեգործության իմաստը, շահել էր Բեվերլի Հիլզի միջավայրի համակրանքը և արդեն ճանաչում էր Գուրգեն Մելիքյանին:

Ինչպես երազկոտ տղեկը դրամ էր հավաքել իր սիրած նվագարանը կիթառ գնելու համար, բայց երբ մի օր հանդիպել էր Գուրգեն Մելիքյանին, առանչնացրել, մի կողմ էր կանչել նրան մի կողմ ու հասուն մարդու խոհեմությամբ հորդորել.

– Գիտեմ, Դուք բարեգործություն եք անում, որբեր եք խնամում, խեղճերին ու նեղյալներին եք օգնում: Ինչ որ հիմա ասում եմ՝ թող մնա մեր մեջ որպես գաղտնիք, նույնիսկ ծնողներս էլ այս մասին թող չիմանան: Վաղուց երազում էի կիթառ ունենալ և այն գնելու համար բավական դրամ եմ հավաքել, բայց հիմա այն Ձեզ եմ տալիս. Դուք ավելի լավ նպատակով կարող եք այն գործածել և օգտակար լինել մեր հայրենակիցներին...

Եվ ճակատագրի բերումով՝ ա՛յս հայորդին է ավտոաղետից զոհվել տասնյոթ տարեկանում...

Նրա հիշատակը վառ պահելու համար էլ ստեղծվել է «Վահագն Սեթյան» բարեգործական հիմնադրամը, որն այսօր իրագործում է ժողովրդանպաստ ծրագրեր ու մարդասիրական նպատակներ: Դա էլ հասարակությունից վաղաժամ հեռացած հայորդու մկրտված կյանքի հետմահու շարունակությունն է: Այժմ նա պարզապես այսպես է ապրում:

«Վահագն Սեթյան» բարեգործական հիմնադրամն իրագործում է հստակ նպատակներ: «Վահագն Սեթյան» հիմնադրամի հոգաբարձությունն իր գործունեության հիմնական ուղղությունն այս է համարում. «Համախմբել բնակիչներին, տեղական գործարարներին և ոստիկանությանը սոցիալական ու համամարդկային բարոյական արժեքների շուրջ, որոնք մենք հարգում ու արժեվորում ենք:

Կազմակերպվող հիշատակի ամենամյա քայլերթ-վազքարշավը, որի ամերիկաբնակ տարբեր ազգերի մասնակիցների թիվը տարեցտարի ավելանում է, խթանում է թիմային աշխատանքը, զորացնում է մասնակիցների ֆիզիկական պատրաստվածությունը, մերձեցնում ու համախմբում է մարդկանց լավ ու բարի նախաձեռնությունների շուրջ: Մենք կայունացնում, հզորացնում ենք մեր պատրաստակամությունն ու նվիրվածությունը խելացի որոշումների կայացմանն ու դրանց կենսագործմանը և վճռականորեն հակադրվում ենք տգեղ ու վտանգավոր այնպիսի երևույթների, ինչպիսիք են հասարակական վայրերում անվայելուչ պահվածքը և ոչ սթափ կամ ցրված վիճակում մեքենա վարելը, որ կարող է ունենալ մարդու առողջության համար ցավալի կամ անկանխատեսելի ողբերգական հետևանքներ:

Ամեն տարի արժանավայել հանդիսավորությամբ մենք նշում ենք պայծառ հայորդու վաղամեռիկ Վահագն Սեթյանի հիշատակի օրը և հանրությանը ի ցույց դնում նրա գեղեցիկ մարդկային կերպարը, հայորդի, ով իր ողջության՝ ցավալիորեն կարճատև օրերին շատ ուրախություն և հրճվանք պատճառեց բազմաթիվ սրտերի՝ հաստատելով օրինավոր հայորդու տիպարը:

Մենք խորին երախտագիտությունն ենք հայտնում մեր հասարակությանը, մեր բոլոր բնակիչներին ովքեր մշտապես հիշատակում են մեր հասարակությունից անժամանակ հեռացած արժանավորներին: «Վահագն Սեթյան» հիմնադրամն իր գործունեությամբ, իր բարեգործական ծրագրերով ու միջոցառումներով մշտապես օգնում է բարեփոխելու կյանքը, կառուցելու ավելի առողջ ու ազնիվ, է՛լ ավելի մարդկային հասարակական հարաբերություններ: Հենց սա է շարունակվող կյանքը, մարդկայնորեն գեղեցիկը և համամարդկային ճշմարիտ արժեքը, որի շուրջ արժե համախմբվել: Վահագն Սեթյանի ոգեկոչման, նրա հիշատակին 2015 թ. դեկտեմբերի 6-ին կա-

յացած հանդիսավոր միջոցառումներին մասնակցել է նաև մեր հիմնադրամի գործադիր տնօրեն Գ. Մելիքյանը, ով այդ օրերին գործուղման էր մեկնել ԱՄՆ:

ԻՐԱՋԵԿ

Վահագն Մեթյանի հիշատակի քայլերթ-վազքարշավը

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ
բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝
ԱՎԱԳՅԱՆ Ա. բ. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ. բ. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ. պ. գ. թ,, պրոֆեսոր
Համարի շարվածքը Ս. Մուրադյանի:

Տպաքանակը՝ 99:
Թերթը բաժանվում է անվճար:

Խմբագրության հասցեն՝
Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ բանասի-
րության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ:
Հեռ.՝ 060 710 629, 055 – 52 - 29 – 36, 55 - 25 – 37,
52 - 29 – 36